

**«Լեռներ հայրենի» ժողովածուից պատմվածքներ**

*Աղբյուրը՝ Վախթանգ Անանյան, «Լեռներ հայրենի», Երևան, 1963թ.*

*Թվայնացումը՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի սովորողների և դասավանդող՝ Թամար Ղահրամանյանի*

*Սրբագրումը՝ Թամար Ղահրամանյանի*

**Ցանկ**

1. [Ինչն է կարմրին տալիս](#)
2. [Լոռեցոց հնարած բաներից](#)
3. [Խոմփոցը քարայրում](#)
4. [Պողոս ամնի և Ղազարանց Կարոյի վեճը](#)
5. [Հոգատարություն](#)
6. [Երբ տեղը նեղն է](#)
7. [Դեպք Սև ջրի ափին](#)
8. [Ներոնի մահը](#)
9. [Միջօրեին](#)
10. [Մայր այժ](#)
11. [Աղաչանք](#)
12. [«Ով իր մորթին փոխի՝ ջուխտ գնդակի կհանդիպի»](#)
13. [Թուխիկը](#)
14. [Խիղճը](#)
15. [Արծիվները](#)
16. [Լորիկները](#)
17. [Մելոնց Ամին](#)
18. [Ասատուրանց Դանելը](#)
19. [Ղազար քեռին](#)
20. [Դարբնանց Մինասը](#)
21. [Հոն ամին](#)
22. [Մադոնց Խեչանը](#)
23. [Օղի վաճառողները](#)
24. [Մինդին](#)
25. [Փափախչի Ասատուրը](#)

## 1. Ինչն է կարմրին տալիս

Գորիսի Բռուն գյուղացի Լդարին Ծատուրի կարմիր կովը կորավ: Ծատուրը բարձրացավ իր տան կտուրը, ձեռքը դրեց ճակատին հով արած նայեց սարերին ու տեսավ մի բան է կարմրին տալիս Քաչալ-սարի լանջին: «Էդ կա-չկա իմ կարմիր կովն է...», — վճռեց Ծատուրն ու ջորին նստեց գնաց: Գնաց-գնաց հասավ Քաչալ-սարի լանջին, տեսավ կարմրին տվողը մի ահագին մորի է...

## 2. Լոռեցոց հնարած բաներից

Մի ագռավ պտտվում էր Լոռու ձորի վրա, իսկ ժայռերի գլխի տափարակին մատաղ էին մորթել ու քեֆ էին անում մեր պապերը: Չունան փչում էր, ջահելները «ջիրինդ» էին խաղում, իսկ կրակի վրա խլթխլթում էր չորսկանթանի կաթսան՝ մատաղը մեջը: Պտտվեց-պտտվեց ձորի վրա այն ագռավը ու եկավ եռացող կաթսայի մեջ ընկավ:

-Վո՛ւյ քռանաս դու, մեր մատաղը հարամեց,- ճչացին կանայք ու խփեցին իրենց ծնկներին: Դե հո հարամ մատաղ չէին բաժանելու. կաթսան շուռ տվին տափարակի կանաչի վրա: Շուռ տվին ու մնացին քարացած, մեջը մի խաշված օձ կար:

Մի տես աստծու բաներին, է՛, — քրթմնջում էին ծերերը,-կյանքը տվեց, բայց տես քանի՛ կյանք ազատեց...

## 3. Խոմփոցը քարայրում

Լավ որսորդ էր Գետաթաղ գյուղացի Բաբան, բայց ափսո՛ս, այն հիվանդությունն ուներ, որով տառապում են մեր որսորդներից շատերը:

Հաջող որսից տուն էր եկել ու գյուղացիներին գլխին հավաքած պատմում է.

-Տաթևի դիմաց մի քարափի միջից ծուխ էր դուրս գալիս՝ հասկացա, որ արջերի բերանի բուղն է: Խանչալս հանեցի ու էդ գոլ մառախուղի միջով մտա սարի սիրտը: Գնա՛ցի-գնացի հասա արջերի բնին. տեսնեմ հրես յոթ արջ իրար կողքի մեկնված ո՛նց են խոմփացնում... Հիմի մոլորվել եմ, թե որից սկսեմ:

Խանչալս քաշեցի ամենամեծին մորթեցի, մնացածները հանգիստ խոմփացնում են, ո՛նց են խոմփացնում... Էդպես հերթով բուլորին էլ մորթեցի՝ խոմփոցները կտրեց...

-Բաբա՛, բա իսկի ոչ մեկին էլ չզարթնե՞ց -հարցնում են գյուղացիները:

Հը՛մ, իմ խանչալի տակ ա՞րջ կզարթնի...

## 4. Պողոս ամնի և Ղազարանց Կարոյի վեճը

Ձմեռանոցում ամեն երեկո գյուղի տավարածները հավաքվում էին Ալխանանց Արթնի խրճիթը ու թեժ բուխարու առաջ լսում Պողոս ամու գրույցները:

Համա փչող էր հա՛ այդ Պողոս ամին...

Բայց ո՛վ կհամարձակվեր նրա սուտը բռնել:

Մեկ-մեկ նրա ստերի վրա ծիծաղում էր իր ընկերը՝ Ղազարանց Կարոն, այն էլ երբ մոտները մարդ չլիներ: Իսկ տավարածների մոտ ո՞նց կարելի էր Պողոս ամու պատվին կպչել. մեծ հեղինակություն էր վայելում նա մեր ձմեռանոցում:

Մի երեկո Պողոս ամին թե՛

– Կա՛րո, գլուխդ տմբտմբացնում ես, վայ թե էն աշխարհքը գնալու օրդ մոտեցել է:

Կարոն պատասխանում է.

– Մինչև քեզ չուղարկեմ, ես գնացողը չեմ:

– Ախր չուխեդ թագա է, աչքս վրեն է մնացել, դու շուտ գնա, որ շորերդ հագնեմ,- իր առաջարկը հիմնավորում է Պողոս ամին:

Այդպես վիճում են, վիճում ու հրապարակորեն պայման կապում, որ ո՛վ շուտ մեռնի, կենդանի մնացողը նրա շորերը հագնի:

Իրար ձեռք են տալիս, պայմանավորվում ու, բուխարու առաջ նստած, շարունակում են իրենց զրույցը:

Պողոս ամին նորից բաց է անում իր ստերի տոպրակը:

– Երեկ իրիկուն գյուղից գալիս տեսա գելերը Քարկապի մոտ շերեփով իրար ջուր են վրա տալիս:

Ասում է ու հաղթական նայում զարմանքից բերանները բաց տավարածներին:

– Հա՛, -հաստատում է Կարոն,- քեզանից հետո, որ ես անց էի կենում Քարկապով, տեսա շերեփի կտորները ճամփու տակին թափված են...

– Հասա՞, պլտան Կարո, ուրեմն ես սու՞տ եմ ասում, – նեղանում է Պողոս ամին:

– Չէ, ի՞նչի ես սուտ ասում, շերեփի կտորները աչքովս եմ տեսել,- քմծիծաղ է տալիս Կարոն:

– Ձեռ ես առնում, հա՞...

Ու այդ օրից մինչև իր մահը Պողոս ամին խոռով է մնում իր մանկության ընկեր Կարոյից:

Մահանալիս էլ նրա հետ կապված պայմանը քանդում է ու պատվիրում է իր տնեցոնց.

– Որ մեռնեմ շորերս Կարոյին չտաք: Նա քանի՞ գլխանի է, որ իմ սուտը մարդկանց մոտ բռնի...

Այդպես էլ նրա շորերը Կարոյին չտվին:

## 5. Հոգատարություն

Լոռու ձմեռանոցներից մեկի մոտ փափախը գլխին, մազոտ դեմքով մի ծերունու հանդիպեցինք:

– Բարի աջողո՛ւմ, որսի եք գնու՞մ,- հարցրեց նա մեր հրացաններին նայելով:

– Հա՛, կխտարի ենք գնում,- հաստատեց ընկերս:

– Բա սելը որդի՞ բերեմ,- լուրջ դեմքով և գործնական հարցրեց ծերունին:

– Հարկավոր չի, բիձա՛, նեղություն մի քաշի,- զգացված պատասխանեցի ես ու հետն էլ մտածում եմ.

«Տես ի՛նչ ջիգարով մարդիկ են, է՛, մեր լոռեցիները»:

Ծերունին զարմացած վեր քաշեց թավ հոնքերը ու անկեղծ կարեկցությամբ հարցրեց.

– Բա առանց սելի ո՞նց կլի՛ ... Բա էնքանը ո՞նց եք բերելու...

Երեկոյան դեմ, երբ լեռներից իջնում էինք հոգնած ու դատարկաձեռն, այն ժամանակ միայն հասկացա, որ լոռեցին ձեռք է առել մեզ: «Բա սելը որդի՞ բերե՛մ ... Բա առանց սելի ո՞նց կլի՛ ...»:

## 6. Երբ տեղը նեղն էր

Մոլլան իր տան առաջ կորեկ էր ցանել: Կորեկը լավ բերք էր խոստանում, բայց մի աներես վարազ ամեն գիշեր դուրս էր գալիս Քոի եղեգնուտից ու քանդում արտը:

– Ա՛յ ալլահի անիծված, հենց իմ ա՞րտը գտար,- փնթփնթում էր մոլլան ու մտածում, թե ի՞նչ անի որ իր կորեկը փրկի վարազի ժանիքներից:

– Հարամեց, մնացածն էր հարամեց...: Այ մարդ մի փոս փորիր արտի մեջ, գուցե մեջը ընկնի- ազատվենք,- ասում է կինը:

Մոլլան այդպես էլ անում է: Մի խոր փոս է փորում արտի մեջ, երեսը խոտով ծածկում-քողարկում: Մյուս օրը գնում է տեսնում վարազը փոսն է ընկել: Ուրախացած կռանում է, որ լավ նայի, փոսի պռունկը փուլ է գալիս, և ինքն էլ է գլորվում ցած: Վարազը բրթբրթում է մարդու վրա, իսկ սա ահով նայում է գազանի սուր-սուր ժանիքներին ու ասում.

– Այ ալլահի օրհնված զավակ, այ իմ մախմուր մազերով բարեկամ, ախր մոլլան քո քեռին է, նրա արտը քեզ փեշքեշ, ինչի՞ տես վրես մոթմոթում...

## 7. Դեպք Սև ջրի ափին

Նստել էի Սև ջրի ափին, եղեգի խրճերի վրա և ռետինե սապոգներով ոտներս կախել էի ջրի մեջ: Իմ ընկեր Ավազը որս էր անում ինձնից քիչ դեմը:

Այդ գետը հոսում է հանդարտ, հունը տղմոտ է ու խոր: Ես լողալ չգիտեմ և եթե ընկա իմ ոտների մոտ պտտվող կապարագույն ջուրը՝ այլևս փրկություն չկա: Բայց այդ մասին չէի մտածում, ուշադրությունս իմ գլխի վրայով թռչող բաղերի կողմն էր:

Կրակեցի մի փոքր երամի վրա. մի բաղ շանթահարված ցած ընկավ, և ես տեսա շանս ալիքաձև թռիչքները եղեգների մեջ: Այդ պահին զգացի, որ տակիս խուրձն իջնում է: Մինչ կհասկանայի, որ խուրձերը դարաված են անհատակ ճահճի վրա, հավասարակշռությունս կորցրի և երեսիս վրա գլորվում էի ջուրը, երբ զգացի, որ մեկը բռնեց ծոծրակիցս, ինձ թափով ետ քաշեց և մեջքիս վրա պատկեցրեց ափին: «Ի՛նչ ժամանակին հասավ Ավազը...», – անցավ մտքովս, և երբ շուտ եկա շնորհակալություն հայտնելու, երջանկությունից փայլող հայացքի հանդիպեցի. շունս նայում էր ինձ ու յուրովի ժպտում:

Համոզվելով, որ կյանքս փրկված է՝ նա ուրախ ուստյուններով գնաց սպանված բաղի կողմը:

Եվ եթե ես այժմ կենդանի եմ ու «Անահիտ» կինոնկարում խաղում եմ Նարիմանի դերը, դրա համար այս խելոք կենդանուն եմ պարտական, – վերջացրեց իր պատմությունը հայկինոյի դերասան որսորդ Խաչիկ Աբրահամյանը՝ իր շան գլուխը շոյելով:

Իսկ շունը իր խելոք աչքերով այնպես անձնվիրաբար էր նայում նրան, որ զգում էիր, թե ամեն վարկյան պատրաստ է զոհվել իր տիրոջ համար:

## 8. Ներոնի մահը

Անունով էր միայն Ներոն, իսկ բնավորությամբ ճիշտ հակառակն էր՝ միշտ սիրալիր, միշտ բարի և պատրաստակամ: Տասնհինգ տարի տիրոջը հավատարիմ ծառայելուց հետո, ուժասպառ եղավ, մազը խամրեց, աչքերը պղտորվեցին:

Երբ տերը հրացանը ձեռքին տնից դուրս էր գալիս որսի մեկնելու, կենդանուն այլևս չէր համակում որսորդական տենդը: Իր անկյունից նա միայն հայացքով հետևում էր տիրոջը մինչև մեքենա նստելը և

նորից ընկնում այն մռայլ անտարբերության մեջ, որ հատուկ է գառամյալ արարածներին:  
Վերջապես լուր առա, որ Ներոնը մերձիմաս է: Տերը՝ Խաչիկ Աբրահամյանը, երկարատև գործուղման մեջ էր, ուստի Ներոնի տանջանքներին կհին էր ներկա և թոռ՝ Գագիկը: Նրանք տխուր և գլխահակ նայում էին միջանցքում մեկնված կենդանուն:

-Հինգ օր է տանջվում է, հոգին չի տալիս,-վշտահար գանգատվում էր որսորդի կինը: — Աչքը շարունակ ճամփին է...

-Խաչիկը ե՞րբ է շրջանից վերադառնալու:

-Դեռ մի շաբաթ էլ կա... էսպես, մահվան հետ կոիվ է տալիս, մինչև որ տերը գա... Շարունակ աչքը շենքին է, տե՞ս...

Տիրոջ կարոտը...

Այն ժամանակ հարևաններից մեկը խորհուրդ տվեց տիրոջ որսորդական հագուստը շան առաջ դնել:

-Թող տեսնի, կարոտն առնի հանգստանա...

Դուրս բերին հրացանը, փամփուշտակալը և արյունը վրան չորացած գորշ բլուզը:

Կենդանին ճիգ գործադրեց վեր բարձրացավ, հոտոտեց ծանոթ, հարագատ իրերը, նրանից իր որսորդ ընկերոջ հոտն առավ և արցունքները գլոր-գլոր թափվեցին նրա խամրող աչքերից:

Ապա մեկնվեց, խոր հոգոց հանեց և հավիտենապես փակեց աչքերը:

Արդյոք ի՞նչ հիշեց Ներոնը այս կյանքին հրաժեշտ տալիս. իր անցած-գնացած երիտասարդությունը, թե՞ մեր աննման լեռները, որոնց ծերպերում որս էր անում նա...

## 9. Միջօրեին

Շոգ է, անտանելի շոգ: Հուլիսի բարկ արևը կրակ է թափում Արարատյան դաշտի վրա:

Մասիսների դիմաց շեկ ժայռերով պատած սարեր կան: Դեռ արևածագից առաջ ես բարձրացել եմ և թաքնվել ժայռերում. քարայծերի ցերեկային կյանքն եմ ուսումնասիրում:

Կեսօր է, այնպես են տաքացել դեղնագույն ապառաժները, որ ես տեսնում եմ, թե ինչպես ջերմ օդի ալիքներ են ծփում դեպի դաշտ: Ոչ մի շունչ կենդանի, բոլորն էլ թաքնվել են անձավներում, ճեղքերում, հողի տակ: Օձերը անգամ գետնի տակ են անցել, այնպես շոգ է բուսականությունից գուրկ այդ վայրերում:

Միայն մի արու արծիվ լուռ ու մռայլ կանգնել է ժայռի աստամներից մեկին: Իսկ ես ունաբի թոռումած թփի մեջ թաքնված դիտում եմ այդ արծվին ու մտածում. կիզիչ արևից ինչու չի պաշտպանվում այս թռչունը:

Ժամերով անշարժ նստած է նա իր բարձունքին ու զգգոն պահակի նման իմ կողմն է նայում: Նայում է ուշադիր, կասկածանքով: Վտա՞նգ էր սպասում ինձնից, թեև ունի կարող է թռչել, հեռանալ: Թե՞ պահակ է կանգած ուրիշների կյանքին, որոնք չեն կարող հեռանալ այստեղից: Պիտի լուծեմ այդ հանելուկը:

Հայացքով խուզարկեցի ժայռի ծերպերը: Ահա, արծվի դիմաց, ժայռի անմատչելի բարձունքին չոր ճյուղեր են երևում:

Անցա մի բարձր քարի հետև, նրա թիկունքով գաղտնի վեր բարձրացա: Եվ երբ զգուշությամբ գլուխս հանեցի քարի հետևից, տեսա ապառաժի թարեքին չոր ճյուղերի կույտին կանգնած է մի այլ արծիվ, որ թափահարում է իր թևերը: Ի՞նչ բանի է այս թռչունը այրող արևի տակ, ինչո՞ւ չի պատսպարվում անձավի հովտում: Եվ ինչո՞ւ թևերը թափահարում է, բայց չի թռչում:

Զգույշ և աննկատելի վեր ձգվեցին և ուշադիր նայեցին. երկու ձագ կտուցները վեր գցած հաճույքով վիզները տրամադրել էին այն մեղմ քամուն, որ գալիս էր հենց մոր թևերից: Ահա ինչու է անընդհատ

թափահարում իր թները այս թռչունը. հով է անում ձագերին...

Շոգ է, անտանելի շոգ Արարատյան դասի վրա կախված այս ժայռերում: Բոլոր շնչավորները թաքնվել են շոգից: Միայն այս փետրավոր ծնողներն են կանգնած միջօրեի արևի տակ. մեկը իր ընտանիքի պահակն է, մյուսը հով է անում սիրասուն ձագերին, սեփական հովհարներով...

## 10. Մայր այծը

Քյարքի լեռան դիմաց մի ժայռապատ լեռնագոտի կա: Նրա գլուխը տափակ է ու սիգավետ:

Աշնան կանաչով պատած տափարակով ես առաջ սողացի, հասա ժայռի պոնկին ու ցած նայեցի:

Ներքևում ծնկահար խոտի մեջ նստոտած՝ որոճում էին վեց-յոթ քարայծ: Նրանք այնպես հանգիստ ու անմեղ էին, գողտրիկ գլուխները նրբագեղ վզերի վրա վեհորեն պահած, որ հիացած նայում և ավստում էի կրակել: Բայց ողջ օրը՝ սկսած լուսադեմից՝ ես շրջել էի այդ լեռներում, հոգնել էի ծայր աստիճան և անուղղելի սխալ գործած կլիների, եթե ենթարկվեի իմ զգացմունքներին և բաց թողնեի այդքան հաջող որսը:

Եվ ես խլացնելով իմ մեջ խղճի ձայնը՝ կրակեցի խմբից քիչ հեռու նստած մի այծի վրա:

Որոտից սարսափահար՝ կենդանիները վեր թռան ու սուրացին ժայռերի երկայնքով: Այն այծը, որի վրա կրակել էի, նայեց ինձ չգիտեմ ինչ հայացքով, - հեռու էր, նրա աչքերի արտահայտությունը որոշել չէր կարող, - և փոխանակ փախչելու իր ընկերների հետևից, գողտրիկ ուստյուններով վազեց դեպի ինձ և կանգ առավ ժայռի ստորոտում, ինձնից ընդամենը տասնհինգ քայլ ցած: Այս անգամ ես որսացի նրա որոնող հայացքը, որ լի էր տագնապով ու սարսափով: Ուղիղ հրացանիս փողի դիմաց կանգնել է նա դողդողացող մկաններով, տեսնում է ինձ՝ իրեն մահ բերողին, բայց չի փախչում. նրա հայցքը տենդագին փնտրում է մեկին:

Մինչ ես նշան էի բռնել իմ գոհի կրծքին և մատու սեղմում էր հրացանի ձգանը, այդ «մեկը», որին նա փնտրում էր տենդագին և որի համար նա այնպես անվախ վազում էր դեպի մահաբեր զենքը, այդ «մեկը» հանկարծ դուրս թռավ ոտքիս տակից՝ ժայռի խոռոչից, ուր թաքնվել էր, ուստոստալով հասավ իրեն փնտրողին ու մտավ նրա վզի տակ:

Ուն է . . .

Ես լայն ժպտացի և հրացանս ետ քաշեցի: Այդ սրտաշարժ տեսարանի առաջ անմիջապես հանգավ որսորդական կիրքն իմ մեջ: Եվ երբ, հաջորդ վայրկյանին, մայր և ուլ իրար գտած՝ միասին սլանում էին փախած հոտի հետևից, ես հրացանս օդում ճռճելով ճանապարհ էի դնում նրանց ու ցնծագին բացականչություններով թնդացնում ժայռերը:

Այդ պահին իմ դիմացի լեռան ծերպերում թնդյուններ լավեցին, և ականջիս հասավ ընկերոջս ուրախ կանչը.

-Խփել ե՞մ, արի տանե՞նք, արի օգնի՞ր . . .

Եվ նա սկսեց ինքն իրեն երգել ու սուլել: Ուրախ էր: Ուրախ էր, որ այժ էր սպանել: Ես նույնպես ուրախ էի: Բայց ուրախ էի, որ չէի սպանել, որ չորբացավ այն սիրուն ուլիկը . . .

## 11. Աղաչանք

Ամառնամուտ էր:

Գնում էի Հաղարծնի անտառով: Երկնամերձ հաճարենիները այնպես փարթամորեն էին տերևակայել, որ արեգակի ճառագայթները միայն տեղ-տեղ էին նեղ շերտերով թափանցում անտառի աղջամուղջը: Աշնանը թափված տերևները ձյան հաստ շերտի տակ կպել էին իրար, ամրացել, և ես ընթանում էի տերևներից մամլած այդ խավավոր «թաղիքի» վրայով:

Իմ առաջ մի փոքր ձորակ բացվեց, այդտեղ սև հաղարջի թփեր կան: Մոտեցա, ձեռքս մեկնեցի նոր սևացող ողկույզներին և դեռ չքաղած՝ խշխշոց լսեցի վերևում, զգացի, որ անասուն է անցնում: Որսորդի բնագոյով իսկույն բացեցի հրացանիս փակը ու հայցքով շարունակեցի հետախուզել անտառը: Այդ պահին ուղիղ իմ դիմաց, հաճարենիների ճերմակավուն բների հետևում մի թուխ արջ երևաց, որ աշխատում էր աննկատելի առաջ գնալ և նետվել հաջորդ ձորակը: Արջն այդպես է՝ քանի իրեն չեն նկատել, զսպում է իր տագնապը, կեղծ հանգիստ է ձևանում և ջանում է անձայն ծածկվել մարդու տեսողությունից: Ու հենց դուրս եկավ որսորդի տեսողության դաշտից՝ փախչում է՝ ճյուղ ու թուփ փշրելով:

Հիմա ձևացնում է, թե՛ հե՛ջ, իբր ինձ չի նկատել ու մի աչքով թաքուն իմ շարժումներին հետևելով՝ առաջ է գնում կողքահանց: Մեծ, փորձված արջ է և շատ լավ գիտե, թե ինչ է ձեռքիս, ու գաղտագողի հրացանիս է նայում:

Ես անմիջապես նստեցի և նշան բռնեցի: Հենց հրացանը մեկնեցի, դա երեսով դարձավ դեպի ինձ, պզզեց և առաջին թաթերը վեր բարձրացրեց: Դողդողում է սարսափից ու ինձ թվում է իր արջային լեզվով բան է ասում- խույ, աղաչական ձայներ է հանում: Այսպես անսովոր էր այդ գազանի վարմունքը, որ ես անակնկալի եկած, ետ քաշեցի զենքս ու դիտում եմ հետաքրքրությամբ, զարմացած:

Թաթերն իջեցրեց, նորից դարձավ չորքոտանի ու առաջ է գնում դիմացիս լանջով՝ ու էլի աչքը չի կտրում ինձնից: Ես ուշքի եկա և արագ նշան բռնեցի: Քիչ էր մնում ձգանը քաշեի, երբ նորից թաթերը վեր բարձրացրեց ու առանց խոսքերի պաղատեց՝ «Մ՛ի սպանի ինձ, մա՛րդ. . .»:

Այնքան արտահայտիչ էին նրա շարժումները, որ ինձ մի պահ թվաց, թե նա ինձ ուղղակի ասաց թախանձանքով լի այդ բառերը:

Եվ ինձ նույնպես պատեց ահը, ահ, որ առաջացավ անլեզու կենդանու այդ զարմանալի արարքից: Եվ երբ տեսա այդքան հաջող որսս ձեռքիցս գնալու է, ինձ նախատեցի իմ թուլության համար ու անմիջապես մոլեզնեց որսորդական կիրքն իմ մեջ: Նորից նշան բռնեցի: Եվ երբ արջը նորից թաթերը վեր բարձրացրեց, իմ մեջ խղճահարությունը տեղի տվեց արհամարհանքի՝ ինչ շատ է մտածում իր կյանքի մասին. . . և ինչքան էլ ստորանում է, մինչդեռ կարող էր հարձակվել ու քաջությամբ իր կյանքը պաշտպանել. . . Չէ՞, սա իր կյանքի համար դողացող թուլամորթի մեկն է. . . Եվ հենց ձգանը քաշում էի, գազանը տարօրինակ ձայն հանեց, և այդ ձայնի վրա ինձնից քիչ ցած խշոց լսվեց թփերում: Նայեցի և քարացա. նրա քոթոթները դուրս վազեցին թփուտից, ուր թաքնվել էին իրենց մոր հրամանով, ու թեք լանջն ի վեր շտապեցին նրա մոտ:

Ահա՛ թե ինչի է կյանք խնդրում ինձանից. . . Ահա ում համար է ուզում ապրել. . .

Կարծես սրտիցս մի ծանր քար ընկավ: Հրացանը գոգիս դրած, հրճվալից հայացքով նայում եմ սայթաքող, զլորվող ու նորից անձոռնի վազքով դեպի իրենց մայրը շտապող քոթոթներին, ու գոհ եմ, որ ձգանը քաշեցի:

Եվ երբ ձագերը հասան իրենց մորը, ես կանգնեցի ու օդում գլխարկս թափահարելով բարձր կանչեցի.

- Գնացեք, կյանքներդ բաշխում եմ. . . Բարի ճանապարհ. . .

Արջը շարժվեց, բայց ահով լի հայացքը չէր կտրում ինձնից, և ես տրամադիր եմ ենթադրելու, որ այդ պահին նա իր արջային լեզվով օրհնում էր ինձ.

- Շնորհակալ եմ, մա՛րդ, որ խնայեցիր կյանքս՝ ձագերիս համար:  
Ես գլխարկս նորից թափահարեցի, ինչպես ճանապարհ են դնում ծանոթներին, և նրանք՝ մայր ու ձագեր, մտան հաջորդ ձորակը ու ծածկվեցին իմ տեսողությունից:

## 12. «Ով իր մորթին փոխի՝ ջուխտ գնդակի կհանդիպի»

Հին ժամանակ մի ազահ որսորդ է լինում:

Էդ որսորդը շատ քարայծեր ու ոչխարհներ է սպանում, բայց աչքը չի կշտանում: Մի օր էլ կնոջն ասում է.

-Ես դրանց կենդանի պիտի բռնեմ:

Ասում է, հրացանն առնում է սար է բարձրանում, մի շատ խոշոր արու այծ է սպանում: Տիկ է հանում էդ այծին, մտնում մորթու մեջ, ահագին եղջյուրներն էլ ամրացնում իր գլխին ու այդպես գնում լեռան ձերպերը, ուր քարայծերն էին թաքնվում:

Ժայռի տակով նա զգուշությամբ մոտենում է այծերի հոտին, էն մտքով, որ նրանց խաբի ու կենդանի-կենդանի բռնի:

Էդտեղ մի որսորդ դարան մտած՝ որսի է սպասելիս լինում: Էդ որսորդը տեսնում է մի ահագին քարայծ կամաց-կամաց գնում է դեպի մառախուղի մեջ հազիվ երևացող հոտը: Հրացանը մեկնում է, որ կրակի, մեկ էլ մտածում է. «Շատ է մեծ, վայ թե մի գնդակով չընկնի»:

Իր հին հրացանի փողից մի մեծ կլոր գնդակ էլ է ներս գցում, շամփուրով ամրացնում և զույգ գնդակներն էլ արձակում է քարայծի վրա: Կրակելուն պես մի մարդկային ճիչ է լսում: Վազում տեսնում է, որ իր սպանածը մարդ է՝ այծի մորթու մեջ. . .

-Այ մարդ, ինձ ինչի՞ տակ գցեցիր,- գոչում է որսորդը սարսափած:

Այդտեղ այծի մորթով մարդը պատմում է իր ազահության ու խորամանկության մասին և հոգին փչում է:

Որսորդը նրան թաղում է, գերեզմանին մի տափակ քար է գցում ու վրան փորագրում հետևյալ

խրատական ու իմաստալից խոսքը:

«Ով իր մորթին փոխի՝ զույգ գնդակի կպատահի»:

## 13. Թուխիկը

Ասում են, ժամանակով Երևան քաղաքում մի նշանավոր որսորդ բժիշկ է եղել: Ազոավի բնից աղվամագով ծածկված մի ձագ է հանել նա ու բերել տուն:

Ժամանակ է անցել, ազոավը մեծացել է, գորշ փետուրները դարձել են թուխ, և իր թռչնային բնագրով կապվել է իր տիրոջ հետ:

Ասում են , բժշկի հետ սեղան էր նստում այդ ազոավը, աթոռակից կտցում էր իր բաժին կերակուրը, «ղա-ղա» կանչելով շնորհակալություն հայտնում տիրոջն ու գնում քաղաքային այգու ծառերի վրա զվարճանալու իր ցեղակիցների հետ: Երեկոյան դեմ տուն էր վերադառնում, իր կոշտ ձայնով բարի գիշեր մաղթում բժշկին և գնում թառելու:

Բժիշկն ազոավին հաճախ էր որսի տանում: Խելացի թռչունը երկնքից իր սուր հայացքով խուզարկում էր լեռան ձերպերը, գտնում էր որսը և գալիս տիրոջ ուսին թառում՝ կտուցը որսի ուղղությամբ մեկնած:

Գնում էր որսորդն ազոավի կտուցի ուղղությամբ և այդ նրա լավագույն կողմնացույցն էր:



Իսկ թանձր մառախուղին, հանդում մոլորված ժամանակ, հավատարիմ ագռավը ցույց էր տալիս նրան ճանապարհը:

Բժիշկը, շրջապատված հետաքրքիր բազմությամբ, մոտենում էր քաղաքային այգուն և կանչում էր հեռվից .

-Թուխի՜կ, Թուխի՜կ . . .

- Ղա՜, դա՜ . . . - լսվում էր պատասխանը՝ ծառին իջած երամի միջից:

Մի անգամ էլ, երբ բժիշկը նստած էր այգու ճաշարանում, ընկերներից մեկը հարցրեց,- Վաղուց ես նստած, ինչու՞ ճաշ չես պատվիրում:

- Ընկերոջս եմ սպասում . . .

Ապա վեր կացավ, բացեց ճաշարանի պատուհանը:

- Թու՛խիկ, ինձ քաղցած սպանեցիր, անպիտա՛ն, ախր քե՛զ եմ սպասում,- սրտնեղած ձայն տվեց նա:

-Ղա՜, դա՜ . . . - լսվեց երկնքից, և երամից մի ագռավ բաժանվելով՝ պատուհանից ներս ընկավ, թառեց սեղանին: Ու այն ժամանակ միայն տերը ճաշ պատվիրեց:

Քաղաքում ասելիք էր դարձել Թուխիկը:

Այդպես սիրով ապրեցին իրար հետ որսորդ բժիշկն ու իր փետրավոր ընկերը:

Տերը գառամեց ու մեռավ, իսկ ագռավը նրա դագաղի վրա տխուր ու գլխիկոր նստած, մարդկանց ուսերի վրա տարվեց մինչև գերեզմանատուն:

Դագաղն իջեցրին փոսը, բայց ագռավը թռչելու փորձ չարավ:

-Թուխի՜կ, դուրս եկ,- լացի միջից ձայնեց բժշկի այրին:

Չլսվեց պատասխան «ղա-ղա»-ն, կարծես թռչունը վշտից քարացել էր:

Գերեզմանից հանեցին նրան և բժշկի աճյունը հողով ծածկեցին:

Բարակ անձրև էր տեղում: Ժողովուրդը ցրվեց, բայց Թուխիկը մնաց թարմ հողաթմբին վշտահար ու մոլոր կանգնած:

Հին, քարասիրտ աշխարհում մարդիկ տեսան այդ դեպքը և մեկը քրթմնջաց.

-Երանի չե՞ր, որ բոլոր արարածներն էլ այդ թռչունի չափ իրար հավատարիմ մնային . . .

Եվ երբ գերեզմանին պատվանդան կառուցեցին և վրան դրին անվանի բժշկի կիսանդրին, քանդակագործը չմոռացավ նրա հավատարիմ Թուխիկին քանդակել տիրոջ ուսին թառած:

Ասում են, մինչև այժմ էլ մի ծեր ագռավ տխուր-սրտում թառում է բժշկի կիսանդրու ուսին: Թուխիկն է . դար է անցել, բայց չի մոռանում իր տիրոջը . . .

Իսկ նրա դիմաց, քաղաքային այգու հնամենի ծառերի տեղը կանգնած ջահել բարդիների վրա աղմկում են ծեր Թուխիկի երիտասարդ սերունդները . . .

#### 14. Խիդճը

Երբ ես փոքր էի, մի զարմանալի դեպք տեղի ունեցավ մեր Ղազախում: Անվանի որսորդ Աբելը գնում է որսի: Միրտը լիքը՝ հոգին՝ փոթոթվելով է գնում. որդին սպանվել էր տաճկական ճակատում, իսկ հարսը մի սիրուն երեխա էր աշխարհ բերել, մի մեղմ որբուկ:

Միրտն արցունքով լիքն է որսի գնում անվանի որսորդը, ու նրա աչքի առաջ մի նուճար որդին էր ու իր շարմաղ հարսը՝ երեխան գրկին, սիրտը կոտրած, վիզը ծուռ . . .

Գնում է , գնում որսորդ Աբելը մտամոլոր ու դուրս է գալիս ծառերով շրջապատված ու արևոտ մի բացատ: Ու այդտեղ նրան պատահում է մի մայր եղնիկ: Աբելը հրացանը մեկնում է, բայց զարմանքով տեսնում է,

որ եղնիկը չի փախչում, սիրուն դունչը վեր ցցած՝ օդը հոտոտում է ու նայում:

Խղճահարվում է Աբելը, բայց որսորդական կիրքը հաղթում է նրան՝ ու որոշում է սպանել եղնիկին: Բայց երբ նշան է բռնում, որ ձգանը քաշի, տեսնում է հրացանի առաջ իր շարմաղ հարսն է կանգնած՝ երեխան գրկին, վիզը ծուռ . . .

Մարդը շանթահարված ետ է քաշում զենքը ու տեսնում է էլի եղնիկն է մոլոր կանգնած: Աջքերը տրորում է որսկան Աբելը, իրեն թափահարում սթափվում ու նորից նշան բռնում... Նորից տեսնում է իր վշտահար հարսին, սիրուն աչքերն արցունքով լիքը կանգնած իր հրացանի փողի առաջ՝ երեխան գրկին:

-Գնա, ինձ առնի տակ մի գցիլ, - գոչում է որսորդը և նրա ձայնի վրա թփի տակից դուրս է ցատկում եղնիկի սիրունիկ հորթը, հասնում է մորը, նրա դնչի տակ մտնում, և մայր ու որդի սլանում են դեպի անտառի խորքը:

Այդ օրվանից Աբելը թողնում է որսորդությունը:

## 15. Արծիվները

Վերադառնում էինք որսից: Ժայռերի սուր կատարներին անշարժ նստած արծիվները մռայլ հայացքով ճանապարհ էին գնում:

-Ես դրանց փետուրները քամուն պիտի տամ: Գիտե՞ս ինչքան վայրի ուլ են ուտում,-ասաց ընկերս, հրացանը ուսից իջեցնելով:

Իրոք, գայլերից է՛լ ավելի արծիվներն են վնաս տալիս մատղաշ քարայծերին: Այսպես մռայլ, մտախոհ ու համբերատար կանգնած իրենց բարձր դիրքին, նրանք հսկում են շրջապատը: Եվ վա՛յ այն ուլին, որ առանց մոր դուրս եկավ քարանձավից կամ փախուստի ժամանակ հետ մնաց հոտից...

Այդ է պատճառը, որ ես առանց խղճի խայթի ասաց.

– Կրակի՛ր:

Միանասը չոքեց և հրացանի փողը ուղղեց մեր դիմացի բլրի գագաթին. պահակների նման դիք կանգնած գույգ արծիվներին:

Կրակոցին հետևեց թռչուններից մեկի թափոցը, իսկ մյուսը առանց շտապելու թափահարեց իր լայն թևերը:

Մենք բարձրացանք բլուրը և տեսանք ճերմակապոչ գիշակերին, իր ահագին թուխ թևերը փռած, արյունոտ կտուցը խոտերին քսելիս:

-Էլի ուլ կուտե՞ս... դե հիմի՛ կեր, - սիրտը հովացած բացականչեց ընկերս: Բայց երբ նայեցի աչքերին, ափսոսանք կարդացի նրանց մեջ:

Արծիվը դեռ շնչում էր ու ցամաք նետված ձկան նման բերանը բաց ու խուփ անում, կարծես խեսդվում էր օդի պակասությունից:

-Գնա՛նք, - ասաց ընկերս, չգիտես ումնից դժգոհ: Ապա ձայնը բարձրացնելով ավելացրեց.

-Մարդ դրան կխղճա՞...

Երևի խղճալուց էր ասում. ծանր էր տեսնել այդ փառահեղ թռչունի մահը:

Մենք լուռ իջանք ձորը:

Հանկարծ մեր գլխի վերև շափշափյուն լսվեց և մի լայն ստվեր սուրաց բլուրն ի վեր: Վեր նայեցինք. արծվի ընկերն էր վերադառնում: Նա պտույտներ գործեց և իջավ վիրավորի կողքին:

-Հիմա ընկերոջ լեշը կուտի, - ասաց ընկերս չարախիհնդ տոնով:

Բայց նա սխալվեց. արծիվը աղիողորմ ծվոցներով պտտվում էր իր ընկերոջ դիակի շուրջը, կտուցով վեր

էր բարձրացնում նրան, փորձում ոտքի կանգնեցնել ու թոցնել իր հետ...

Մենք քարացած նայում էինք, իսկ թռչունը շարունակում էր իր ողբը:

-Դե լա՛վ, ինչ քնքշությունների ժամանակ է, գնա՛նք, - խրոխտ ասաց իմ ընկերը, և ես նորից զգացի, որ իր խղճի ձայնն էր լռեցնում...

## 16. Լորիկները

Այդ ամառը ես ընտանիքով հանգստանում էի մի լեռնային գյուղում: Մի առավոտ, երբ ես ձին հեծա անտառ գնալու, աղջիկս կանչեց.

-Հայրի՛կ, ինձ համար փոքրիկ ծիտիկ կբերե՞ս...

-Կբերեմ, բալիկ ջան, որ կարողանամ բռնել՝ կբերեմ, -պատասխանեցի ես ու ճանապարհ ընկա:

Գնում եմ անտառով ու մտածում. ինչ լավ կլինի, որ մի թռչունի բույն գտնեմ, մի ճուտ տանեմ տուն, երեխայիս ուրախացնեմ:

Ձիս թեքեցի ճանապարհից, մտա մի բացատ, որի շրջապատում թփուտներ կային: Այս թփերում մանր թռչուններն ու մոշահվերը բույն են դնում, սպասիր՝ մի խուզարկեմ:

Մտածում էի իջնել, հանկարծ ձիս առանց իմ հրամանի կանգ առավ: Նրա առաջից աղմուկով մի լոր թռավ ու անմիջապես ցած իջավ: Մա երևի ճուտ է, որ հեռու չի թռչում, -մտածեցի ես, ցած ցատկեցի, առաջ գնացի, որ բռնեմ: Նորից թռավ, նորից իջավ մի քանի քայլ ինձնից հեռու:

«Չէ, ճուտ չէ, խոշոր է: Բայց ինչո՞ւ չի փախչում-հեռանում ինձնից: Երևի թևը ջարդված է... Մա իմ ձեռքից չի պրծնի», -մտածեցի ես և զգուշությամբ մոտեցա: Նա նորից թռավ և նորից իջավ: Այդպես թռչելով ու իջնելով նա ինձ հեռացնում էր ձիուց: Բայց տեսնում եմ, որ թևերը վնասված չեն, թռիչքի թափից զգում եմ, որ առողջ թռչուն է, հապա ինչո՞ւ հեռու չի թռչում, ո՞ւր է տանում ինձ...

Այդ պահին խրիսինջ լսեցի: Ետ նայեցի, տեսա ձիս փոխանակ արածելումն գլուխը տմբտմբացնելով ընկել է ինչ-որ բաների հետևից: Գնացի դեպի նա: Այդ պահին իմ հետևից լսեցի լորի թպրտոցն ու ծղրտոցը.

հեռվից կարճ թռիչքներով հետևում էր ինձ: Հասկացա. երևի այնտեղ ձագեր ունի: Մոտեցա ձիուն: Իսկ նա ուշադիր նայում է առաջը, գլուխը անհանգիստ տմբտմբացնում ու փռացնում: Ես նույնպես նայեցի ձիու հայացքի ուղղությամբ և խոտերի մեջ նկատեցի մանր, ընկույզի չափ գորշ ու կլորիկ արարածներ: Նրանց մոտ, գետնին փորած ու չոր խոտերով փափկացրած բնում թափթփված էին բծավոր ձվերի կճեպները. ուրեմն նոր են ձվից դուրս եկել: Կռացա, հավաքեցի-լցրի գլխարկիս մեջ՝ տասներկուսն էին: «Ա՛յ, հիմի կուրախանա աչիկս հա՛...», -մտածեցի ես:

Այդ պահին թևերի ձայն լսեցի և մայր լորի աղեկտուր ծղրտոցը: Լորիկները խղճուկ ու անպաշտպան ծվծվացին ու խլրտացին գլխարկիս մեջ: Մայր լորը կանգնել էր բարձր մոլախոտի լայն տերևին ու տազնապի մեջ ճչում էր, աղերսա՞նք էր, դա թե՞ սպառնալիք իմ հասցեին՝ չհասկացա: Միայն այն զգացի, որ ճուտերին տուն տանելով՝ ծանր վիշտ եմ պատճառում մի փոքրիկ մոր, և որ այդ վիշտը նա տանել չի կարող...

Եվ գլխարկիս պարունակությունը դատարկեցի խոտերի մեջ ու ձին հեծնելով՝ հեռացա այդ վայրից. հարկավոր էր շուտ հանգստացնել ալեկոծվող մոր սիրտը:

Երեկոյան, երբ տուն դարձա, պատմեցի, թե ինչքան ճուտերի պատահեցի ես բացատում:

-Բա ինչի՞ չբերիր... - լացակումած հարցրեց երեխաս:

-Նրանց մայրը չթողեց, -պատասխանեցի ես:

-Այնտե՞ղ էր:

-Այո՛, այնտեղ էր և ինդորում էր, որ ձեռք չտամ իր ձագերին:

-Որ ճուտերին բերեիր, լա՞ց կլինէր:

-Այո՛, բալի՛կս, լաց կլինէր...

-Դե լավ ես արել, որ չես բերել, — իսկույն համաձայնեց երեխաս, և նրա արցունքոտ աչքերը շողացին բավականությունից:

1953

## Մեր գյուղի հին մարդիկ շարքից

### 17. Մելոնց Ամին

Միջահասակ, կլոր երեսը միշտ մագոտ, տրեխներով ու տանը գործած շալե շորորով մի մարդ էր Մելոնց Ամին: Ի՞նչ էր նրա անունը՝ ոչ ոք չգիտեր, բոլորն էլ Ամի էին կանչում նրան, որ մեր կողմերում հորեղբայր է նշանակում:

Հիշում եմ, առաջին պատերազմի տարիներին ռազմաճակատից մի նամակ ստացվեց Պետրոս Մելյանի հասցեով: Այդպիսի մարդ չկար մեր գյուղում: Շատ հարցուփորձ արին, ոչ ոք չիմացավ, թե ով է Պետրոս Մելյանը: Նույնիսկ Ամին կինն ու երեխաները չիմացան: Վերջապես գյուղի քահանան նայում է ծննդյան մեծ մատյանն ու գտնում հասցեատիրոջը: Գյուղում տարածվեց տարօրինակ լուրը .

- Բա չեք ասել, որ Պետրոս Մելյանը Մելոնց Ամին է եղե՞լ . . .

Ամին ինքն էլ զարմացավ, երբ իմացավ, որ իր անունը Պետրոս է . . .

Ամառը սարերում էր անցկացնում, ձմեռը՝ ձմեռանոցում, գյուղում շատ քիչ էր երևում Մելոնց Ամին:

Լավ անասնապահ էր ու իր ամբողջ կյանքը դրել է անասունների խնամքի վրա: Դե, մեզ մոտ այն ժամանակ հեշտ չէր անասուն պահելը: Խոտհարքները բարձր սարերում էին կամ անտառի հեռավոր բացատներում: Ճանապարհներ չկային, խոտ բարձած երկանիվ սայլերը ահագին բարձրունքից շուռ էին գալիս և մարդ ու լծկան տակով անելով՝ գլորվում ձորը:

Կարկուտն էլ մի կողմից, ցավն ու չոռն էլ մյուս կողմից: Ու կարիքից, ձախորդությունից միշտ տխուր, միշտ սրտնեղած Ամին հոգու մաղձը թափում էր իր կենդանիների ու երեխաների վրա:

Մեկ էլ տեսար մահակը վերցրեց ու սկսեց իր շանը՝ մե՛կ-հի՛նգ . . .

-Ես քո տիրոջ էսենցն ու էնենցը, - հայհոյում էր նա, - հերիք չի՞ լակն ուտես, գնաս ուրիշի դռանը հաչե՞ս . . .

Կամ՝ ձմեռանոցում կբարձրանար կտուրն ու կկանչեր հանդում հոտն արածացնող իր տղային .

- Էհէյ, Խեչա՛ն Խեչա՛ն . . .

-Հե՛յ, - լավում էր դիմացի սարից:

-Ա՛յ գարհումա՛ր, գիտես թե ջան եմ ասելո՞ւ . . .

Միայն այդքան կասեր ու կիջներ կտուրից:

Միշտ տխուր էր, միշտ դժգոհ, միշտ հայհոյող:

Բայց, զարմանալի բան, թաքնված ժպիտ կար նրա ամեն խոսքի մեջ:

Մարտ ամսի մի ցուրտ ու անձրևոտ օր էր, երբ քաղցած կուչ էինք եկել մի խոնավ քարայրում, Ամին շունը եկավ, պառկեց տիրոջ ոտների մոտ ու սկսեց ծմբալ . նա էլ էր քաղցած:

- Ծմրա-ծմրա՛նք, Բողար ջան, ծմրա-ծմրա՛նք, - դարդոտ ասում էր Ամինն իր շանը . .  
Բայց շան գործը այդ օրը հաջողվեց. Ժայռից անասուն էր ցած ընկել-ջարդվել, Բողարը արյան հոտը բռնած անհետացավ մառախուղի մեջ և քիչ անց վերադարձավ փորը կուշտ, աչքերն ուրախ, շրթունքները լիզելով, ու սկսեց տիրոջ հետ կատակներ անել: Դե այդ մոայլ օրը, երբ նիհար անասունները կուչ են եկել անձրևի տակ քաղցած փորով Ամինն ո՞նց կատակ աներ: Ու սրտնեղած սկսեց նախատել Բողարին .  
-Դե իհարկե պար կգաս. քո փորում հարսանիք ա, համա իմ փորում կնունք էլ չկա . . .  
Ափսո՛ս, Մելոնց Ամինն շուտ մեռավ: Ապրեր, թեթևանար իր բեռը , երևի չունենար այն օրերի սրտնեղությունը և այլևս մոայլ ու դառն կատակներ չաներ:

## 18. Ասատուրանց Դանելը

Նիհար, վիզը բարակ, մեծ փափախը գլխին մի մարդ էր Ասատուրանց Դանելը: Իր կյանքում բացի չորհանությունից ոչ մի բան չգիտեր: Սար լանջով մեկ փռում էր ոչխարի հոտը, մեջքը մի քարի դեմ առնում, շվի էր նվագում կամ գալիս էր մեր՝ տավարածներս մոտ, օրվա նորություններ իմանալու:  
- Է՛, - տնքում էր նա ծակ տրեխներին նայելով, - կաշին թանկացավ, կաշի՛ն, մնացածը՝ հե՛չ . . .  
Նրա համար կյանքում գլխավոր բանը կաշին էր . դե, ամեն օր սարերը չափում էր ոտքով, իսկ գիշերները հանդերն ընկած կորած ոչխար էր փնտրում կամ գայլերին էր հալածում «արխաջի» մոտքերից . կաշի՛ն՝ ըկդիմանա հովիվ մարդուն:  
Մի օր Դանելը սարից իջել էր Դիլիջան, յուղ-պանիր էր վաճառել, տրեխացու էր գնել ու մնացել էր ապշած նրա գնից: Տասնհինգ թվին էր, դրամի արժեքը օրօրի ընկնում էր:  
Դիլիջանից եկավ Դանելը ու երկու օր ոչ ոքի հետ չխոսեց, մոայլ էր: Երրորդ օրը մոտեցավ մեր խմբին ու սիրտը բաց արավ առաջներս .  
- Աշխարհքը կքանդվի . . . անպայմա՛ն կքանդվի, - համոզված հայտարարեց նա: - Չորս հարյուր մանեթ եմ տվել մի ջուխտ տրեխացու առել, ի՛նչ տրեխացու, ոնց որ լվի կաշի . . .  
Ու վշտացած, գլուխն օրորելով գնաց հասնի իր հեռացող հոտին:  
Ինչքա՛ն պիտի բարակ լինի իր գնած տրեխացուն, որ լվի կաշվի հետ է համեմատում Դանելը քեռին, - մտածում ենք մենք:  
Մյուս օրը Դանելը էլի հոտը փռեց լանջին ու մոտեցավ մեզ: Ավելի տխուր էր երևում:  
- Ի՞նչ է պատահել, քեռի Դանել, - հարցրինք մենք:  
Նստեց, գլուխն առավ ծնկների մեջ ու մի պահ անշարժ մնաց.  
- Է՛, էլ ինչ պիտի պատահեր . . . գիշերս են սատկած շունը կաշին տարել է . . . Դիլիջանից էի առել չորս հարյուր մանեթով . . . Կաշի որն է, երկու մատը ճակատ ուներ . . .  
Ու կաշվի հաստությունը ցույց տալու համար նա երկու մատը միացրեց ու մեկնեց մեզ . . .

## 19. Ղազար քեռին

Երկար, ճերմակ մորուքով, փայտը ձեռքին, հին չուխան հագին, աչքերը ցավոտ, մեջքը կռացած մի ծեր մարդ էր Ղազար քեռին: Միշտ լավատես, միշտ լավն ասող, հարևաններին սիրտ սովող, դժբախտության դեպքում մխիթարող . ահա նա՛ իր բնավորությամբ:

Երբ գայլը ընկնում էր հոտի մեջ, տասը-քսան ոչխար խեղդում . Ղազար ամին գնում էր իր գլխին վալ սվող տիրոջ մոտ ու մխիթարում .

- Էն որ մնացել է, գտած բան է: Անիրավը կարող էր բռնորին կոտորել . . .

Որ մեկը ծառից ընկնում էր ոտը ջարդում, Ղազար քեռու առաջին հարցն էր լինում .

- Հո երկու՞ ոտը չի՛ ջարդվել: Չէ՞ . . . Դե, փառք աստծու, լավ է որ մեկն է, թե չէ կարող էր երկուսն էլ ջարդվել . . . Էն ժամանակ ինչ կլինէր դրա օրը . . .

Որ մեկից գողերը մի անասուն էին տանում, Ղազար ամին տիրոջն այնպիսի խոսքեր էր ասում, որ սա ուրախանում էր, թե ինչ լավ է, որ մեկն են տարել: Իսկ եթե բռնորը տանեի՞ն . . .

Մարդուն հասած ամենածանր դժբախտությունն էլ կարող էր պատճառաբանել, արդարացնել:

-Ցավը որ կա, մարդկանց համար է: Մարդը որ իր ցավը չքաշի , հո էն սարը չի քաշելու,-խրախուսում էր նա:

Մի անգամ էլ մի կին անտառում հաճար թափ տալիս ընկնում է ծառի վրայից ու մեռնում:

Ուրիշների հետ Ղազար քեռին էլ է գնում դեպքի վայրը: Ահով նայում է հաճարենու բարձր կատարին, նայում է նրա տակի ձորում կուտակված քարերին, որոնց վրա ընկել ու ջախջախվել է կինը և գլուխն օրորելով ասում է .

-Էլի լավ է պրծել . . . Փառք աստծու, էլի լավ է պրծել:

## 20. Դարբնանց Մինասը

Հիշում եմ, մեր գյուղում հեշտ չէր տեսրակ, մատիտ, նավթ լամպի ապակի և ուրիշի մանրուք գնելը: Թանկ էր, իսկ փող հո չկար ու չկար:

Երբ ես սովորում էի գյուղական դպրոցում, ինձ համար մի գրչածայր գնելը բավական դժվար բան էր: Իսկ մեզնից աղքատ մարդ շատ կար գյուղում:

Ահա մեր գյուղացի Մինասը: Կինը նրան ուղարկել է Դիլիջանից լամպի ապակի գնելու: Ապակին գնել ու փափախը կոնատակին դրած, քրտնքի մեջ կորած բարձրանում է դեպի սարի լանջին փոված մեր գյուղը:

Դիլիջանի ու մեր գյուղի միջև մի քարքարոտ դարիվեր կա: Ոնց է լինում, այդ դարիվերում ապակին վայր է ընկնում-ջարդում: Խեղճ մարդը նստում է գետնին, աչքերը խուփ անում և շուտ շուտ ասում:

-Աստված ջան, երազ ըլի, երազ ըլի . . .

Աչքերը բաց է անում . չէ՛, երազ չի, ապակին իսկապես որ ջարդվել է:

Դե հինգ կոպեկը որտեղի՞ց, որ ետ դառնա մեկն էլ գնի

Կոտրված սրտով գնում է գյուղ:

Մեր գյուղի ներքև մի հարթություն կա: Այդտեղ Մինասը մի ասեղ է գտնում, կռանում է, որ վերցնի՝ չի կարողանում: Դե, հողագործի կոշտ ու կոպիտ մատնե՛ր, նա էլ բարակ, փոքրիկ ասեղ, ո՞նց բռնի: Համ էլ մի ուրիշ տեսակ մատներ էին Դարբնանց Մինասի մատները: Բայց այդ մատների մասին ընթերցողին գաղափար տալու համար լավ է նկարագրենք այդ մարդու ոտքերը:

Ամեն աշնան ու գարնան անձրևներին այնպիսի ցեխ էր լինում մեր գյուղի փողոցներում, որ կանայք չէին կարողանում գնալ աղբյուրը՝ ջրի : Ու բռնորն էլ սպասում էին, թե երբ է Մինասը կովերին աղբյուր տանելու, որ ճամփան բացվի: Իսկ ինչպե՞ս էր Մինասը դեպի ջուրը ճամփա բացում: Իր հսկայական ոտներով: Գյուղացիները չափազանցրած ասում էին .

-Մինասը վաթսուներեք նումերի տրեխ է հագնում:

-Մի գոմշի ձագի կաշվից Մինասի համար մի ջուխտ տրեխացու հագիվ դուրս գա . . .

Այդպիսի ոտներ ուներ Մինասը: Ու մեր գյուղի կաչուն, ծնկահար ցեխի միջով որ նա գնում էր փնչոցով, կարծես մի-մի թիակ էին դնում ցեխին ու հուպ տալիս: Նրա վիթխարի ոտնատեղերով գյուղի հարսները ազատ կերպով գնում էին աղբյուրից ջուր բերելու . . .

Այդ ոտներին համապատասխան էլ մատներ ուներ Մինասը: Դե, այդպիսի մատներով նա ո՞նց վերցնեք իր գտած ասեղը: Գետնին չոքած չարչարվում է, չարչարվում՝ չի կարողանում վերցնել, միամիտ գյուղացին ուրիշ հնար էլ չի կարողանում մտածել: Բայց ո՞նց թողնի-գնա, այն ժամանակ մեր գյուղացին ընկած ասեղը, մեխը, լծկանի ոտքից պոկված պայտը, թոկի կտորը անպայման պիտի վերցնեք: Վերջապես հնարը գտնում է. մի մեծ քար տնքտնքալով բերում է դնում ճանապարհի մեջտեղը՝ ասեղի վրա, նշան անում: Երբ հասնում է տուն, ուրախ ասում է կնոջը.

-Կնիկ ջան, Դիլիջանի ճամփին քեզ համար մի ասեղ եմ գտել, չկարողացա վերցնեմ, գնա բեր:

-Ո՞նց գնում էն մի թիքա երկաթի կտորը, ա՛յ սրտամեռ, - վրան չանչ է անում կինը:

-Կգտնե՛ս, վրեն մի ահագին գերեզմանաքար եմ դրել . . .

## 21. Հոն ամին

Ինչքա՛ն անկուտուրական մարդիկ կային հին գյուղում: Շատերը միայն ամառը՝ գետում էին լողանում, հովիվները հո ամիսներով շոր չէին հանում:

Դրանցից էր Հոն ամին: Մի ոչխարի չափ բրդոտ փափախ էր դնում գլխին, տրեխների մեջ հարդ լցնում, որ ոտքերը տաք մնան ու չախմախավոր հրացանն ուսին զգած՝ գնում էր որսի:

Մի անգամ որսի ճանապարհին դրա գլուխը քոր է գալիս:

Փափախը վերցնում է՝ քորը իսկույն կտրվում է: Գլխին է դնում թե չէ, էլի քոր է գալիս:

-Էս ի՞նչ բան է,- զարմանում է Հոն ամին: Փափախը վերցնում է ու նայում ներս՝ աստառը ծակ է: Մատը զգում է ծակը լայնացնում, տեսնում է մուկը աստառի ներսում ճուտեր է հանել:

Գլուխը քոր ածողը մկան ճտերն են եղել . . .

## 22. Մադոնց Խեչանը

Շատ կատակասեր մարդ էր մեր գյուղացի Մադոնց Խեչանը:

Շեկ, ցանցառ մազերը դեմքին, աչքերը միշտ կիսակոցել, միշտ թաքնված ծիծաղով լիքը: Գյուղում կոլտնտեսություն կազմակերպվելուց առաջ պատահեցի, միասին Դիլիջանից գյուղ գնացինք: Ճանապարհին հարցնում եմ.

- Ո՞նց եք ապրում, քեռի Խեչան:

Ասում է.

-Լավ ենք, Վախտանգ ջան, ինչի լավ չենք որ. խանութից երկու կտոր շաքար եմ առնում, տանում եմ տուն, դնում սեղանի վրա, հայելին էլ բերում եմ դնում առաջը՝ դառնում է չորս կտոր: Երեխանց ասում եմ՝ էս երկուսը ինձ, էն երկուսը ձեզ . . . Էդպես, երկուսը չորս շինելով ապրում ենք, ինչի ենք վատ որ, փառք

աստծու . . .

Երբ գյուղ հասանք, Խեչանը խնդրեց մտնեմ իր օջախը, հետը աղ ու հաց կտրեմ:

- Թե թան ունեք՝ կգամ, թանի կարոտել եմ, - համաձայնվեցի ես:

Ներս մտանք, բայց դեռ Խեչանի կինը ինձ համար թան չլցրած, երեխաներից մեկը լալով ներս ընկավ, կախվեց հոր փեշից:

- Էն Վաչիկը սելս ջարդեց, արի գնանք ծեծի, - լալով պատմում ու հոր փեշից քաշում էր երեխան:

Խեչանը ճարահատյալ տեղից վեր կացավ. պարզ էր, որ մինչև Վաչիկին չծեծեր, երեխան չէր հանգստանալու:

Դուրս եկավ տնից, աչքերը կկոցելով նայեց արևին ու հանգիստ ասաց.

- Այ որդի, հլա օր շատ կա, կթակենք, էլի՛, ի՞նչ ես վռագում . . .

Հանգի՛ստ, անվրդո՛վ . . . Դե ոնց չխաղաղվեց այդպիսի հանգիստ մարդու մոտ:

### 23. Օղի վաճառողները

Ամեն աշնան Իջևանի շրջանից մեր գյուղը հոնի օղի էին բերում ծախելու: Հոնի օղին, դե, ուրի՛շ բան է, ուրի՛շ ուժ, ուրի՛շ հոտ ունի: Հոնի օղու մասին մեր գյուղացի Ամպակն ասում էր՝ «Որ խմում եմ՝ գլխիս ծերիցը լիմոնի հոտը դուրս է գցում . . .»:

Կարծեմ հենց այդ Ամպակը մեր գյուղի ներքև իջևանցի օղի ծախողների է պատահում: Դրանք երեք հոգի էին՝ ահագին փափախներով ու կեղտոտ արխալուղներով: Օղիով լիքը տկերը իշից ցած էին դրել, կենդանուն արձակել էին, որ արածի, իսկ իրենք ճամփի եզրին նստոտած օղի էին խմում: Որ շատ խմում են, մեկը զարմացած նայում է արածող ավանակին ու բացականչում.

-Տղե՛րք, էշը երկուսը դառավ . . .

(Այսինքն, այնքան է խմել, որ էշն աչքին երկուսն է երևում)

- Հաա՛, էդ լավ է, - ուրախանում է ընկերը, - դե որ էդպես է, էլ ինչի՞՞ ենք ոտով գնում. եկեք էն մի տիկն էլ խմեք՝ դառնա երեք էշ, ամենքս մեկին նստենք, գնանք . . .

### 24. Մինդին

Յուրօրինակ մարդ էր մեր գյուղացի Մցկանանց Քոքորը, որին չգիտեմ ինչու, Մինդի մականունն էին տվել: Ամառ-ձմեռ մի ահագին փափախ էր դնում ու ման էր գալիս սպիտաք վարտիքով:

Զարմանալի բան, վարտիքով գյուղամեջ գնալուց չէր ամաչում, բայց որ հարևանի տանը հաց էին առաջարկում, ուտելուց հրաժարվում էր ամոթխածությամբ:

Պատկերացրեք գյուղական թոնրատուն, առաստաղը ծխից սևացած: Մինդին ծալապատիկ նստել է թոնրի մոտ՝ ճերմակ վարտիքով ու լուռ ծխում է իր ծխամորճը: Հարսը դնչկալը բերանին կռանում թոնրից հանում է տաք-տաք լավաշներն ու դեմքը շուռ տալով և դնչկալը բերանին հագցնելով՝ կամաց ասում է.

- Ապի՛, հաց կեր . . .

«Չխոսկան» է, դեմ ու դեմ խոսել չի կարելի:

Մինդին լուռ ծխում է ու երբեմն իր կոշտ ձայնով, ծխամորճի կոթի արանքից մոլտում է.

- Ուտում չեմ . . .



Իր հաշվով շնորհակալություն է հայտնում:

Հարսը մի լավաջ դրեց նրա առաջ և դնչկալի տակից նորից շշնջաց.

- Ապի, կե՛ր. . .

Մինդին ծխամորճը հանեց բերանից, գետնին թքեց ու նեղացած նախատեց.

- Վա՛, բա դու ամոթ չունե՞ս. . . ասեցի ուտում չեմ, էլի՛. . .

Մի տարի Մինդին իր հարևան Ղազարանց Քոքորի հետ գնում է Սևանի գյուղերը. գերաններ է տանում հացի հետ փոխանակելու: Հյուր են մնում Դոմաշեն գյուղում: Շատ են քաղցած լինում ու սպասում են, թե տանտերը երբ է հաց դնելու իրենց առաջ:

Քոքորը, որ մի աչքաբաց ու համարձակ մարդ էր, նայում է թոնրատան առաստաղին ու տանտիրոջը հարցնում.

- Ախպե՛ր, ձեր տան գերանները հացենի՞ են. . .

Տանտերը հասկանում է, թե ինչ է ակնարկում հյուրը ու իսկույն հնարը գտնում է:

- Չէ, ախպեր, սաքրենի են. . .

Լռում են, դժկամ խոսում դեսից-դենից. դե քաղցած մարդը ի՞նչ սրտով զրույց անի. . .

Վերջապես տանտիկինը քուրսին վերցնում է թոնրի վրայից ու կճուճը հանում, կերակուրը դնում է հյուրերի առաջ, սպիտակ լավաջն էլ հետը:

Քոքորը կատակով ասում է տանտիրուհուն.

- Ընկերոջս համար գդալ չբերեք, կուշտ է, չի ուտելու. . .

Մինդին համ ամաչկոտ էր, համ խռովկան: Այդպես էլ չի մոտենում ուտելիքին, ու իսեղճ Քոքորը ստիպված նրա բաժինն էլ է ուտում. . .

Երկու օր մնում են այդ տանը, երկու օր Մինդին հաց չի դնում իր բերանը:

Քոքորը համոզում է, մղկտում, թե՛ «Այ տղա, հանաք արի, հաց կեր, հիմար հո չես. . .»: «Չէ՛ որ չէ, ոնց թե դու խալիսի մոտ ասես՝ գդալ միք բերի. . .»:

Այդպես էլ Մինդին մինչև իր կյանքի վերջը խռով մնաց իր հարևան Քոքորից:

## 25. Փափախի Ասատուրը

Մի անգամ մեր գյուղացի փափախի Ասատուրը գնում է Ղազախ, փափախներ է կարում

աղբբեջանցիների համար ու փոխարենը ցորեն ստանում, բերում գյուղ:

Հիմի երեկո է, Ասատուրը նստել՝ զրույց է անում իր կնոջ՝ Անայի հետ. դե, քանի ամիս է հեռու են եղել իրարից, երևի իրար կարոտել են:

Ասատուրն ասում է.

- Կնիկ ջան, Ղազախում մի լավ ձիու քուռակ պատահեց, քիչ էր մնում առնեմ-բերեմ:

Անան ասում է.

- Ասատուր ջան, դե բերեիր էլի՛. . . լավ կլիներ, վրեն կնստեի, Վարդավառին սարը կգնայի:

- Ինչի՞, բա ոտներդ ինչ են, որ են խեղճ քուռակին ես ուզում նստել, - նեղանում է Ասատուրը:

- Բա ես խեղճ չե՞մ, էնքան ճամփեն ոտով եմ գնում, - բողբոլում է կինը:

- Էն քյորփա քուռակին նստես, որ մեջքը կտորի՞, - բարկանում է Ասատուրն ու կնոջը ոտի տակ տալիս ծեծում. . .

